



# ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

23 նոյեմբերի, 2016 թ.

p. Երևան

## «Երիտասարդություն-Բիզնես-Կառավարություն» հակակոռուպցիոն աշխատաժողով

2016 թվականի նոյեմբերի 18-20-ին Աղվերանում Իրավաբանների հայկական ասոցիացիան, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և «Այսպան քոնն է» հասարակական կազմակերպության հետ համատեղ, կազմակերպեց «Երիտասարդություն-Բիզնես-Կառավարություն» հակակոռուպցիոն աշխատաժողովը:

Աշխատաժողովը կազմակերպվել էր Եվրոպական միության ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ իրականացվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում: Մույն միջոցառումն անցկացվել է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ: Աշխատաժողովին մասնակցեցին միջազգային և պետական մարմինների, բիզնես կազմակերպությունների և միավորումների, ՔՀԿ-ների, ինչպես նաև երիտասարդության ներկայացուցիչներ:

Իրավաբանների հայկական ասոցիացիայի (ԻՀԱ) նախագահ և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող Կարեն Չարոյանը փոխանցեց ներկաներին, որ ներկայումս գործադիրն առաջ է ընթանում մի շարք ուղղություններով, որոնք մշակվել են Իրավաբանների հայկական ասոցիացիայի հետ համատեղ (օր., նոյեմբերի 18-ին կառավարություն ընդունեց ապօրինի հարստացման քրեականացման նախագիծը): ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հակակոռուպցիոն ծրագրերի համակարգող Նաիրա Գյուլնազարյանն ընդգծեց. «Շատ է խոսվում, որ մեր երիտասարդները մեր ապագան են, իսկ ես վտահ եմ, որ նրանք մեր ներկան են»: Արդարադատության նախարարի տեղակալ Մուրեն Քրոնյանը երիտասարդներին հորդորեց գերծ մնալ կոռուպցիայի հետ առնչվելուց, իսկ Հայաստանում ԵՄ պատվիրակության առևտրի հարցերով պատասխանատու Կարեն Ազարյանը շեշտեց. «Երկիրը, որը մաքուր է կոռուպցիայից, աճող, զարգացող երկիր է: Խնդրի լուծման համար հարկավոր է ընդունել, որ այն գոյություն ունի: Հիմա կառավարությունն առում է՝ այո՛, ունենք խնդիր, եկե՛ք լուծենք այն: Այս պահին դուռը բացված է, և դուք պետք է ակտիվ գործեք»:

Պետական եկամուտների կոմիտեի մաքսային հսկողության վարչության պետ Պետրոս Մաղոյանը կարևորեց նմանատիպ հանդիպումները՝ նշելով, որ ԻՀԱ-ի կողմից նախկինում կազմակերպված հանդիպումները վեր են հանել այն խնդիրները, որոնք նկատելի չէին ՊԵԿ-ի համար: Հերացի ավագ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Արին Ավանույանի կարծիքով՝ վարչական և էլիտար կոռուպցիան պետք է կանխարգելի միաժամանակ՝ նաև նման ծրագրերին ավելի մեծ ընդգնում տալով: Մեկ այլ աշակերտ Գոռ Մելիքեյանը առաջարկեց ամեն մեկին սկսել ինքն իրենից:

Եռօրյա աշխատաժողովի ընթացքում ներկայացվեցին 2016 թվականի հոկտեմբերի 21-ին ընդունված ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված հակակոռուպցիոն և բիզնես ոլորտի հատվածները, բիզնես ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի հարցում Կառավարություն-ՔՀԿ-Բիզնես ևնչպիսիք Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կողմից իրականացված գործողությունները և ոլորտային (հարկային և մաքսային, պետական գնումների, ազատ մրցակցության և մենաշնորհների, լիցենզիաների և թույլտվությունների ոլորտներ) առաջարկությունների փաթեթը, «Երիտասարդություն ընդդեմ կոռուպցիայի» ծրագիրը: Ներկայացվեց նաև վերջինիս շրջանակներում ՀՀ հարկային և մաքսային ոլորտներում առկա խնդիրների վերաբերյալ երիտասարդների կողմից մշակված առաջարկությունների փաթեթը: Երրորդ օրը մասնակիցները բաժանվեցին երեք աշխատանքային խմբերի, որոնք վեր հանեցին հարկային, մաքսային և ազատ տնտեսական մրցակցություն ու մենաշնորհների ոլորտների կոռուպցիոն խնդիրները, պատրաստեցին առաջարկություններ բիզնես ոլորտում հակակոռուպցիոն գործողություններ իրականացնելու նպատակով: Խմբերի կողմից առանձնացված գլխավոր խնդիրը հանրային իրազեկվածության ցածր մակարդակն էր: Աշխատաժողովի ավարտին մասնակիցները կիսվեցին իրենց դրական տպավորություններով:

Առկա և միջոցառման արդյունքում համալրված առաջարկությունները քննարկման համար կուղարկվեն ՀՀ կառավարություն և այլ պետական մարմինների՝ ըստ քննարկված ոլորտների, ինչը կնպաստի դրանցում արդյունավետ բարեփոխումների իրականացմանը:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի հիմնական նպատակն է մեծացնել ՔՀԿ-ների դերը հակակոռուպցիոն բարեփոխումների խթանման և իրականացման գործում: Ծրագրի շրջանակներում հզորացվել են ՔՀԿ-ների և ՉԼՄ-ների մոնիթորինգի և վերահսկողության կարողությունները, որի նպատակով ՀՀ արձգերում 105 ՔՀԿ-ների և ՉԼՄ-ների համար կազմակերպվել են հակակոռուպցիոն դասընթացներ՝ կոռուպցիոն բնույթի և տեղեկատվության ազատության խնդիրներն առավել լավ ըմբռնելու համար: Հանրային վերահսկողության արդյունավետության բարձրացման և համապատասխան մոնիթորինգային, վերահսկողական և հետաքննական ծրագրերի իրականացման նպատակով տրամադրվել են փոքր ենթացիվաշնորհներ 20 ՔՀԿ-ների և ՉԼՄ-ների: Ծրագրի շրջանակներում 2014 թ. ստեղծվել է Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան՝ այժմ բաղկացած ավելի քան 80 ՔՀԿ-ներից: Այն առանցքային դեր է խաղում ծրագրի շրջանակներում մշակված ՔՀԿ-կառավարություն կայուն երկխոսության մեջ: Վերջինիս շրջանակներում նշանակալից է Կառավարության և վերոնշյալ կոալիցիայի համատեղ աշխատանքը՝ ապօրինի հարստացման քրեականացման և անկախ ինստիտուցիոնալ հակակոռուպցիոն մարմնի ստեղծման շուրջ:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից (իրականացնող)՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ (գործընկեր): Ծրագրի տևողությունը 3 տարի է (2014 թվականի հունվարից 2016 թվականի դեկտեմբեր): Ծրագրի բյուջեն կազմում է 650 000 եվրո, որից ԵՄ ներդրումը կազմել է 585 000 եվրո, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ներդրումը՝ 31 117 եվրո:

**Իրավաբանների հայկական ասոցիացիան (ԻՀԱ)** ստեղծվել է 1995 թ.-ին: ԻՀԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունը իրազեկ է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված: Մինչև 2016 թ. փետրվար ամիսը ԻՀԱ-ի անվանումն էր Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա:

**Ինֆորմացիայի ազատության կենտրոնը (ԻԱԿ)** գործում է ավելի քան 10 տարի: ԻԱԿ-ի առաքելությունն է նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը և այդ համակարգում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:

**Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել Ծրագրի հանրային կապերի համակարգող Նարինե Կարապետյանին աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-18.00; հեռ.՝ 540199; ֆաքս՝ 580299; URL՝ <http://www.armla.am>: Կատարող՝ Նարինե Կարապետյան, էլ. փոստ՝ [info@armla.am](mailto:info@armla.am):**



Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն  
Շեռախոս՝ +37410 54 64 94  
Շեռապատճեն՝ +37410 54 64 95

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նուս-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակ մասնակցության հետևանքով նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողակախությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ:



Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն Երևանյան գրասենյակ

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը գործում է 1999թ.-ից, որի առաքելությունն է աջակցել Հայաստանին զարգացնելու իր ժողովրդավարական հաստատությունները և ամրապնդելու քաղաքացիական հասարակությունը՝ գործելով օրենսդրական բարեփոխումների, կոռուպցիայի և թրաֆիքինգի դեմ պայքարի, բնապահպանական, մարդու իրավունքների իրազեկման բարձրացման, լրատվամիջոցների ազատության և այլ ոլորտներում:



Իրավաբանների հայկական ասոցիացիա  
Հասցե՝ Նալբանդյան 7, բն. 2  
Երևան, Հայաստան, 0010

Շեռախոս՝ +37410 54 01 99  
Շեռապատճեն՝ +37410 58 02 99



Ինֆորմացիայի ազատության կենտրոն  
Հասցե՝ Բուզանդի 1/3  
Երևան, Հայաստան, 0010

Շեռախոս՝ +37410 56 03 60  
Շեռապատճեն՝ +37410 56 03 60